Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ

Սիրտս վշտահար, մոլորուած մտքով,
Նայում եմ առաջ, դիտում եմ հեռուն,
Եւ հարցնում եմ՝ վհատած հոգով,
Թէ ուր պիտ հասնի մեր նաւն երերուն:

Ալեծուփ ծովին դարձած խաղալիք
Եւ խաւարի մէջ կորցրած ուղին,
Առաջ ենք գնում՝ վաստակած, լռիկ,
Անզօր հպատակ մեր ճակատագրին:

Եւ տեսնում եմ ես, ամէնքս խոնարհ,
Մի յուսով միայն չենք ընկճուում ցայսօր.
Այդ մեր փրկութեան խաչն է լուսավառ,
Մեր յաւէտ անշէջ փարոս դարաւոր:

Սնաթոյր երկնից մռայլ երեսին.
Փայլել է նա միշտ իբր յուսոյ մի շող—
Սիւն կենդանութեան, Մայր Էջմիածին,
Տարագիր հօտի արթուն ժողովող:

(«Արարատ», 1896, մայիս, էջ 227)

ԽԱՉԻ ՆԵՐՔՈՅ

Գիշերուան այս սև, ահռելի խաւար,
Չվհատեցնէ թող քեզ, իմ եղբայր.
Վառ աւետաբեր օրուայ է նշան:
Այդ արշալուսի ընկերն անբաժան:

Չե՞ս տեսել, ինչպէս մռայլ փոթորկին
Ցաջորդում է միշտ լուսագեղ երկին,
Եւ քաղցր ժպտով արևը պայծառ
Գգուում է կրկին սար, դաշտ ու անտառ...

Խաչիդ տակ ճնշուած դարձեալ դու յուսա—
Փրկութեան քո ժամն անշուշտ պիտի գայ.
Արեամբ ներկուեցաւ առաջ Գողգոթան,
Այսպա թէ ծագեց սուրբ օրն յարութեան:

(«Արարատ», 1896, սեպտեմբեր, էջ 405)

ՄԱՅՐՍ

Հոգեմաշ ցաւով ամենայն գիշեր
Ես քուն եմ մտնում արտասուքն աչքիս,
Եւ խուռն երամով տանջող պատկերներ
Շուտ պաշարում են տառապեալ հոգիս...
Մենակ ապրեցայ կարօտ գգուանքի,
Փորձով ես ուսայ խորհուրդը կեանքի,
Օրըս սեւացաւ այրող կրքերից,
Չրգրտայ երբեք մի սիրտ կարեկից:

Եւ քուն եմ մտնում ամենայն գիշեր
Արտասուքն աչքիս, հոգեմաշ ցաւով—
Հանգիստ չեն տալիս սեւ սեւ պատկերներ,
Որ պաշարում են ինձ խուռն երամով...
Եւ ահա դու ես որ ինձ այդ պահում
Երեւում ես, մա՜յր, պսակով զարդարուն.
Դու գրկում ես ինձ սիրով կաթոգին,
Գոչում ես՝ «որդի՜» ձայնով անմեկին:

Եւ տեսնում եմ ես քո փշեայ պըսակ,
Խոցերով ծածկուած քո սիրուն ճակատ,
Եւ մի թափանցիկ նուրբ շղարշի տակ՝
Կուրծքիցըդ հոսող արիւնը կաթ կաթ:
Աչքդ աղերսալիր տեսնում եմ վերաս,
Կանչում եմ քեզ «մա՜յր» ես ձայնով նրուազ,
Եւ կրկին ելնում անքուն վշտահար—
Ա՜խ, մա՛յր, ի՞նչ անէ որդիդ քեզ համար...:

(«Արարատ», 1896, հոկտեմբեր, էջ 456)